

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

<p style="text-align: center;"><b>1. Ընդհանուր դրույթներ</b></p> <p><b>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b> Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) պետ (ծածկագիրը՝ 61-26.7-Ղ4-1):</p> <p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b> Բաժնի պետը հաշվետու և անմիջական ենթակա է Կոմիտեի ղեկավարին, ինչպես նաև անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:</p> <p><b>1.3. Ենթական և հաշվետու պաշտոններ</b> Բաժնի պետին ենթակա և հաշվետու է Բաժնի աշխատողը:</p> <p><b>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:</p> <p><b>1.5. Աշխատավայրը</b> Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյաց 7</p>
<p style="text-align: center;"><b>2. Պաշտոնի բնութագիր</b></p> <p><b>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1. Խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում՝</p> <p>1) ապահովում է Կոմիտեի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, գորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,</p> <p>2) ապահովում է գորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստությունը,</p> <p>3) ապահովում է Կոմիտեում աշխատող պահեստագորայինների ամրագրման աշխատանքների իրականացումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստագորային պատրաստության միջոցառումներին և գորահավաքային գորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,</p> <p>4) ապահովում է ՀՀ օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով Կոմիտեի համար սահմանված միջոցառումների իրականացման գործընթացը.</p> <p><b>Իրավունքները՝</b></p> <ul style="list-style-type: none"><li>• կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով Կոմիտեի պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, աշխատանքների արդյունքներից ելնելով՝ Կոմիտեի ղեկավարին ներկայացնել առաջարկություններ.</li><li>• Կոմիտեի ղեկավարի համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես Կոմիտեի ներկայացուցիչ.</li><li>• առաջարկություններ ներկայացնել գորահավաքային նախապատրաստության և</li></ul>

գորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

- խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով վերահսկել ստորաբաժանումների գորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում գորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված գորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները.

- համակարգել գորահավաքային նախապատրաստության և գորահավաքի հետ կապված միջոցառումները:

**Պարտականությունները՝**

- մշակել գորահավաքային պլաններ և ապահովել դրանց կատարումը.
- ստեղծել կառավարման պահեստային կետեր.
- պլանավորել Կոմիտեում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները և ապահովել դրանց իրականացումը.
- մասնակցել գորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին.
- ամրագրել Կոմիտեի աշխատակազմի պահեստագորայիններին.
- փոխադրել գորահավաքային համակարգերի գործունեությունը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի.
- մասնակցել քաղաքացիների զինվորական հաշվառման, պահեստագորային պատրաստության միջոցառումների իրականացման գործընթացին.
- գորահավաքային նախապատրաստության շրջանակներում և գորահավաքի ժամանակ օժանդակել զինվորական կոմիսարիատներին գորահավաքային խնդիրների լուծմանը.
- ծանուցել գորահավաքի ժամանակ գորահավաքային գորակոչի ենթակա Կոմիտեի աշխատակիցներին, առաքել տրանսպորտային միջոցները հավաքակայան կամ գորամասեր, գորահավաքային պլանների համաձայն՝ տրամադրել շենքեր, կառույցներ և հողամասեր, հաղորդակցության, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ.
- Հսկել գորահավաքային համակարգերի տեղեկատվական անվտանգությունը.

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պետական կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարման կամ իրավունքի կամ գորահավաքային նախապատրաստության և գորահավաքի կազմակերպման բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ.

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Կառավարում արտակարգ իրավիճակներում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

**4. Կազմակերպական շրջանակ**

#### **4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: